ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականի 2-րդ եռամսյակում 1-Коис-2017-МЭК ծածկագրով իրականացված «Վարկային կազմակերպություններին տրամադրվող ֆինանսական տեղեկատվության փաթեթի պատրաստման մոնիթորինգ» գործարքի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2017

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականի 2-րդ եռամսյակում 1-Коис-2017-МЭК ծածկագրով իրականացված «Վարկային կազմակերպություններին տրամադրվող ֆինանսական տեղեկատվության փաթեթի պատրաստման մոնիթորինգի արդյունքները

Մոնիթորինգի իրականացման հիմքը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշման (այսուհետ՝ Որոշում 1) հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

Մոնիթորինգի օբյեկտը՝ «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ (այսուհետ՝ նաև Ընկերություն):

Մոնիթորինգի առարկան՝ Ընկերության կողմից 2017 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

Մոնիթորինգի նպատակը՝ Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում 2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝ 2017 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2017 թվականի նոյեմբերի 15-ը:

Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝ Ընկերության գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականի 2-րդ եռամսյակում 1-Конс-2017-МЭК ծածկագրով իրականացված «Վարկային կազմակերպություններին տրամադրվող ֆինանսական տեղեկատվության փաթեթի պատրաստման մոնիթորինգ

Հաշվի առնելով «Միջազգային էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ-ի 2017 թվականի գնումների պլանը և Ընկերության գլխավոր տնօրենի 2017 թվականի մարտի 31-ի №62ԱԳ-Ա հրամանը Ընկերությունը կազմակերպել և անցկացրել է մրցույթ առանց նախնական որակավորման ընտրության տրված չափանիշներին համապատասխան ֆինանսական տեղեկատվության փաթեթի պատրաստման մոնիթորինգ՝ վարկային հաստատություններին ներկայացման նպատակով:

Հայտարարությունը ընկերության կայքում, ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում հրապարակվել է 2017 թվականի մարտի 31-ին՝ սահմանելով հայտերի ներկայացման տարբեր վերջնաժամկետներ:

Մրցույթի հայտարարումից հետո մրցույթի հրավերին համապատասխան կարգով հայտ է ներկայացրել 2 մասնակից՝ «Գրանթ Թորոնթոն» ՓԲԸ-ն և «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ն, որոնց կողմից ներկայացված հայտերը գնահատվել են մրցութային պայմաններին բավարար:

Համաձայն հաստատված գնահատման չափանիշների և մեթոդիկայի, հայտերը դասակարգվել են հետևյալ կերպ.

Զբաղեցրած տեղ	**Ընկերության անվանում**	**Առաջարկած գին հազ դրամ ներառյալ ԱԱՀ**
1	**2**	**3**
1	«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ	10 800
2	«Գրանթ Թորոնթոն» ՓԲԸ	10 800

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն 16.05.2017 թվականի նիստի №032 արձանագրությամբ հաղթող է ճանաչել «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ին, որի հետ 22.05.2017թ.-ին կնքվել է պայմանագիր՝ 10,8 մլն դրամ արժեքով՝ ներառյալ ԱԱՀ-ն:

1-Конс-2017-МЭК ծածկագրով իրականացված «Վարկային կազմակերպություններին տրամադրվող ֆինանսական տեղեկատվության փաթեթի պատրաստման մոնիթորինգ» գործարքի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ.

1. Նախքան մրցույթ հայտարարելն ընկերությունը չի կատարել շուկայի ուսումնասիրություն:
2. Ընկերությունը գնման հայտարարությունը ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում և պաշտոնական կայքում հրապարակել է 31.03.17-ին՝ սահմանելով հայտերի ներկայացման տարբեր վերջնաժամկետներ. համապատասխանաբար 10.05.17 և 24.05.2017:
3. Մրցութային փաստաթղթերը հայերեն, ռուսերեն տարբերակով տրամադրելու համար ընկերությունը սահմանել է 25 000 ՀՀ դրամ վճար: Համաձայն Ընկերության գնումների կարգի 8.2.3.4. կետի «Մրցութային փաստաթղթերի համար վճարը չպետք է գերազանցի մասնակցին տրամադրվող մրցութային փաստաթղթերի օրինակների քանակի բազմացման (տպագրության) և մասնակիցներին առաքման սովորաբար ընդունված միջոցների համար ծախսերի ծավալը»: Հարկ է նշել, որ սահմանված գումարը փաստաթղթերի բազմացման (տպագրության) և մասնակիցներին առաքման գումարից ավելին է:
4. Ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում տեղադրված հրավերում «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդվածների հղումները սխալ են:

Այս համատեքստում հարկ է նշել, որ գնումների գործընթացների թերի կազմակերպման արդյունքում շուկայականից բարձր գներով ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքները (շուկայական գները գերազանցող չափով) հաշվի չեն առնվի ընկերության սակագներում:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

Ընկերության անվանում «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ

Գնման անվանումը «Վարկային կազմակերպություններին տրամադրվող ֆինանսական տեղեկատվության փաթեթի պատրաստման մոնիթորինգ»

Գնման ծածկագիրը 1-Конс-2017-МЭК

Գնման ձևը Առանց նախնական որակավորման ընտրության բաց միափուլ մրցույթ

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
1	Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և բավարար տեղեկատվություն են տրամադրում, ինչը թույլ է տալիս աուդիտ կամ անկախ ստուգում իրականացնել	☑	☐	☐	

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
2	Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված	☑	☐	☐	

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
	անձը				
3	Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	☑	☐	☐	
4	Մինչև գնումների հրավերների հրապարակելը իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են)	☐	☑	☐	
5	Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրուում հրապարակելուց բացի դիմե՞լ է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար	☑	☐	☐	Հայտարարությունը հրապարակվել է նաև «ՌուսՀիդրո» ԲԲԸ միասնական տեղեկատվական պորտալում:
6	Մասնակից մատակարարների հայտերի ընդունման գործընթացում ապահովվել է արդարությունն ու անկողմնակալությունը	☑	☐	☐	

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
7	Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար	☑	☐	☐	
8	Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը	☐	☑	☐	

9	Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է	☐	☐	☑
10	Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը	☑	☐	☐
11	Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը	☑	☐	☐
12	Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը	☑	☐	☐
13	Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի	☐	☑	☐

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
14	Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	☑	☐	☐	
15	Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին	☑	☐	☐	

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
16	**Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը**	☐	☐	☑	Ընկերությունը շուկայի ուսումնասիրության տվյալներ չի ներկայացրել:
17	**Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)**	☑	☐	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
18	**Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ**	☑	☐	☐	
19	**Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով**	☐	☐	☑	Պայմանագիրը գտնվում է կատարման փուլում:
20	**Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին**	☐	☐	☑	Ընկերությունը շուկայի ուսումնասիրության տվյալներ չի ներկայացրել:

15.11.2017 թ.
(լրացման ամսաթիվ)